

Հ Ր Ա Մ Ա Ն N 32-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ «05» ՓԵՏՐՎԱՐԻ 2019 Թ. ՔԱՂ. ԵՐԵՎԱՆ

ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՆՁԱՆՑ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ
ԴԱՏՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԳՈՐԾՆԱԿԱՆ
ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ ՑԱՆԿԵՐԸ, ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԸ ՈՒ
ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 28-ի N 1717-Ն որոշմամբ հաստատված N 11 հավելվածը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 704-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 18-րդ կետի 20-րդ ենթակետը.

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ՝

1. Հաստատել՝

1) իրավախախտում կատարած անձանց 2019 թվականի գեղագիտական դաստիարակության և կրթության ընդհանուր դասախոսությունների և գործնական պարապմունքների ցանկը՝ համաձայն [N 1 հավելվածի](#).

2) Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության «Արմավիր» քրեակատարողական հիմնարկի դատապարտյալների և կալանավորված անձանց գեղագիտական դաստիարակության և կրթության ծրագրի 2019 թվականի ընդհանուր դասախոսությունների և գործնական պարապմունքների ցանկը՝ համաձայն [N 2 հավելվածի](#).

3) Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության «Աբովյան» քրեակատարողական հիմնարկի դատապարտյալների և կալանավորված անձանց գեղագիտական դաստիարակության և կրթության ծրագրի 2019 թվականի ընդհանուր դասախոսությունների և գործնական պարապմունքների ցանկը՝ համաձայն [N 3 հավելվածի](#).

4) Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության պրոբացիայի ծառայության շահառուների գեղագիտական դաստիարակության և կրթության ծրագրի 2019 թվականի ընդհանուր դասախոսությունների և գործնական պարապմունքների ցանկը՝ համաձայն [N 4 հավելվածի](#):

2. Դասընթացներն իրականացնել 2019 թվականի փետրվարի 11-ից մինչև դեկտեմբերի 20-ն ընկած ժամանակահատվածում:

3. Դասընթացներն իրականացնել 22 մասնագիտական խմբով, 110 կալանավորված և (կամ) դատապարտված անձի հաշվարկով:

ԱՐՏԱԿ ԶԵՅՆԱԼՅԱՆ